տուրքի գումարը բողոքաբերի կողմից նախապես վճարվել է, իսկ վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ Ընկերության կողմից հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված 50,000.00 ՀՀ դրամի չափով և վերաքննիչ բողոք բերելու համար նախապես վճարված 75,000.00 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումարները պատասխանող Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտից ենթակա են բռնագանձման հօգուտ Ընկերության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Նկատի ունենալով, որ Դատարանի 07.08.2023 թվականի վճիռը ենթակա է բեկանման և փոփոխման, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի 26.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, որով ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցվել է մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը www.gnumner.mimfin.am կայքում հրապարակված <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>>-ից հանել <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ենթակա է պահպանման մինչև սույն որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ ԵԴ2/8777/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 07.08.2023 թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

1.1 <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի՝ <<<<ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> 2023 թվականի մայիսի 02-ի թիվ 5 որոշումը մասնակի՝ միայն <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.2 Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի <<<<ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> 2023 թվականի մայիսի 02-ի թիվ 5 որոշումը՝ <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը <<ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/01>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, ճանաչել անվավեր:

1.3 ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտից հօգուտ <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50,000.00 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից

առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

1.4 Դատարանի 26.07.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, որով ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցվել է մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը www.gnumner.mimfin.am կայքում հրապարակված <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>>-ից հանել <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, պահպանել մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը:

2. ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտից հօգուտ <<ՍՈՒՍՄԵՏ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 75,000.00 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

4. Որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Դ. ՍԵՐՈԲՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«23» սեպտեմբեր 2024թվականին որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**